

# 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

## 1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

### 1.1.1. 2003թ. հունվար-նոյեմբերի համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2003թ. հունվար-նոյեմբերին կազմել է 1451254.0 մլն. դրամ և դրա աճի տեմպը 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 115.1%՝ 2002թ. հունվար-նոյեմբերի 112.5%-ի դիմաց:

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում պայմանավորված է հիմնականում բազային 5 ճյուղերի աճով: Ընդհանուր առմամբ, բազային ճյուղերի հաշվին ապահովվել է ավելացված արժեքի արտադրության 117.6% աճ՝ 2002թ. հունվար- նոյեմբերի 114.8%-ի դիմաց:

Դրա հետ մեկտեղ, ՀՆԱ-ի կառուցվածքում այդ ճյուղերի տեսակարար կշիռը 2002թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ ավելացել է 2.1 տոկոսային կետով:

2003թ. հունվար-նոյեմբերին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, ընթացիկ գներով, կազմել է 452.0 հազ. դրամ կամ 779 ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ 2002թ. համապատասխան ցուցանիշը կազմել էր 375.6 հազ. դրամ կամ 656 ԱՄՆ դոլար:

### ՀՆԱ-ի արտադրությունն ըստ տնտեսության հիմնական բազային ճյուղերի

(%)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատ- վածի նկատմամբ		Նպաստման չափը (տոկոսային կետով) ՀՆԱ-ի հավելաճին		ՀՆԱ կառուցվածքը ընդամենի նկատմամբ	
	հունվար- նոյեմբեր		հունվար- նոյեմբեր		հունվար- նոյեմբեր	
	2002	2003	2002	2003	2002	2003
<i>ՀՆԱ-ն, հիմնական գներով</i>	112.7	115.6	11.5	14.1	90.5	91.0
այդ թվում						
արդյունաբերություն	116.1	118.2	3.3	3.9	21.3	22.6
գյուղատնտեսություն	104.1	102.2	1.1	0.5	24.4	21.9
շինարարություն	142.5	153.1	4.7	6.9	13.0	16.8
տրանսպորտ և կապ	106.2	106.6	0.4	0.4	6.3	5.9
առևտուր և հանրային սնունդ	115.0	114.4	1.3	1.3	9.2	9.1
Ընդամենը, բազային ճյուղերը	114.8	117.6	10.8	13.0	74.2	76.3
Ընդամենը, այլ ճյուղեր	106.5	106.7	0.7	1.1	16.3	14.7
Ապրանքների և ներմուծման զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	110.7	110.3	1.0	1.0	9.5	9.0
<b>ՀՆԱ-ն, շուկայական գներով</b>	<b>112.5</b>	<b>115.1</b>	<b>12.5</b>	<b>15.1</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>